

**Համաձայնեցված է**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ  
Վ. Գաբրիելյան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱ ՊԵԿ ՆԱԽԱԳԱՀ  
Գ. Խաչատրյան**

27 ապրիլի 2011 թ.

16 մարտի 2011 թ. N 12

**Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Ջ Ա Բ Ա Ն ՈՒ Մ N 12**

**ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳԱԶԱԼՑՄԱՆ (ԳԱԶԱԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ)  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՄՍԱԿԱՆ ՉՍՓԻ  
ԿԻՐԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ**

«Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 59.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեության հաստատագրված վճարի ամսական չափը հաշվարկվում է՝ ամսվա ընթացքում իրացված գազի ծավալի նկատմամբ մեկ մետր խորանարդ գազի հաշվով 20 դրամ հաշվարկային դրույքաչափի կիրառելով: Հաշվարկային դրույքաչափով հաստատագրված վճարի հաշվարկման համար ամսվա ընթացքում իրացված գազի ծավալը չի կարող պակաս լինել ամսվա ընթացքում ստացված գազի ծավալի 87.5 տոկոսից:

Օրենքի 59.10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեության հաստատագրված վճարի նվազագույն ամսական չափը յուրաքանչյուր գազալցման կայանի համար չի կարող պակաս լինել՝

- Երևան քաղաքում գտնվող գազալցման կայանի համար՝ 1500000 դրամից,
- Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Արագածոտնի մարզերում գտնվող գազալցման կայանների համար՝ 1125000 դրամից,
- այլ վայրերում գտնվող գազալցման կայանների համար՝ 900000 դրամից:

Օրենքի 98-րդ հոդվածի համաձայն Օրենքի 7 հոդվածի «գ», «դ», «ե», «ը» «ժգ», «ժդ», «ժե», «ժզ», «ժը», «ի» և «իա» ենթակետերով նախատեսված գործունեության կազմակերպման համար հաստատագրված վճարի հաշվարկը կասեցվում է վճարողի կողմից հարկային տեսչության մարմնին գործունեության դադարեցման (կասեցման) մասին դիմում-հայտարարություն ներկայացնելու դեպքում՝ հայտարարության մեջ նշված օրվանից, որը չի կարող հայտարարության ներկայացման հաջորդ օրվանից ավելի շուտ լինել:

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով Օրենքի պահանջները»:

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով **պաշտոնապես պարզաբանում եմ.**

Ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեությունն ամսվա ընթացքում դադարեցնելու դեպքում տվյալ ամսվա (գործունեության դադարեցման օրն ընդգրկող ամսվա) համար Օրենքի 59.10-րդ հոդվածով սահմանված՝ հաստատագրված վճարի ամսական նվազագույն չափի նկատմամբ Օրենքի 98-րդ հոդվածի դրույթները կիրառելի չեն: Ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեության դադարեցման օրը տվյալ ամսվա 1-ը համարվելու և հետագայում տվյալ ամսվա ընթացքում այդ գործունեությունը չվերսկսելու դեպքում տվյալ ամսվա համար Օրենքի 59.10-րդ հոդվածով սահմանված՝ հաստատագրված վճարի ամսական նվազագույն չափը չի կիրառվում: